ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՌՈՒՍԱՑ ԼԵԶՎԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

Նախագիծ արձանագրային

..... 2017 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՌՈՒՍԱՑ ԼԵԶՎԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

Փաստաթուղթը մշակող մարմինը՝ ՀՀ կրթության և գիտության նախարարություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն հայեցակարգով ներկայացվում են ՀՀ հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող հաստատություններում ռուսաց լեզվի դասավանդման համակարգի զարգացման հիմնական ուղղությունները, հենակետային սկզբունքները, հիմնական խնդիրների նկատմամբ տեսակետների համակարգը, սկզբունքները, նպատակը:

ԱՄՓՈՓ ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

Հայոց լեզուն՝ որպես Հայաստանի Հանրապետության պետական լեզու, այն առանցքն է, որի շուրջը ձևավորվում է հայկական ինքնությունը, քաղաքական, մշակութային, կրթական տարածքը, քաղաքացու անձնական ազատության, ազգային մտածողության պահպանման, ինչպես նաև որակյալ կրթություն ստանալու, օտար լեզուների տիրապետման գործոնը:

Հայ երիտասարդների կողմից մի քանի օտար լեզուների տիրապետումը դարձել է ժամանակի, ինչպես նաև աշխարհում տեղի ունեցող ինտեգրացիոն գործընթացների պահանջը:

Նկատի ունենալով բոլոր բնագավառներում ժամանակակից մասնագետների պատրաստման գործում օտար լեզուների իմացության կարևորությունը՝ Հայաստանի Հանրապետության կրթական համակարգում անհրաժեշտ է կատարել բարեփոխումներ, որոնք քաղաքացիներին հնարավորություն կտան տիրապետելու մի քանի օտար լեզուների, ինչպիսիք են ռուսերենը, մեկ կամ մի քանի եվրոպական (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն և այլն) և արևելյան (արաբերեն, պարսկերեն, չինարեն և այլն) լեզուներ:

Ռուսաց լեզվի տիրապետումը հանդիսանում է քաղաքացու մրցակցային

առավելությունը բարձրագույն կրթություն ստանալիս և մասնագիտական հմտություններ ձևավորելիս:

Արտադրության, գիտության, կրթության և մշակույթի վերածնունդն ու զարգացումը, ինչպես նաև համաշխարհային հանրության հետ Հայաստանի մասնակցությունը աշխարհատնտեսական և աշխարհաքաղաքական մարտահրավերների դիմագրավմանն ու գործընթացների իրականացմանը մեր երկրում առաջացնում են **հայ երիտասարդության կողմից ռուսաց լեզվի ազատ տիրապետումն ապահովելու խնդիր և անհրաժեշտություն**:

III ՆՊԱՏԱԿՆԵՐ

Սույն հայեցակարգի նպատակը ռուսաց լեզվի ուսումնասիրության և դասավանդման բարձր որակի ապահովումն է:

Ռուսաց լեզվի ուսուցման նպատակը պետք է լինի նախապատրաստել սովորողներին միջլեզվական և սոցիալմշակութային շփումներին, մշակույթների երկխոսությանը, ձևավորել սովորողին՝ որպես միջմշակութային հաղորդակցության սուբյեկտի, որը լեզվի յուրացման ընթացքում ձեռք է բերում գիտելիքներ իր երկրի և ուսումնասիրվող լեզվի երկրի և դրա մշակույթի մասին:

ՀՀ կրթական համակարգում ռուսաց լեզվի ուսումնասիրման և դասավանդման համակարգի զարգացման նպատակներն են՝

- սովորողի բազմակողմանի զարգացումը ռուսաց լեզվի՝ հաղորդակցական կարողությունների ձևավորման միջոցով,
- ռուսաց լեզվի հանրայնացման և Հայաստանի Հանրապետության ուսումնական հաստատություններում ռուսաց լեզվի դասավանդման և ուսումնասիրման համակարգի զարգացման հիմնախնդիրների համակարգային լուծումները,
- ռուսաց լեզվի կրթական ծրագրերի բովանդակության, ինչպես նաև ռուսաց լեզվի դասավանդման մեթոդիկայի արդիականացումը,
- ռուսաց լեզու դասավանդողների աշխատանքի որակի բարձրացումը,
- հանրամատչելի տեղեկատվական պաշարների զարգացումը, որն անհրաժեշտ է կրթական ծրագրերի, այդ թվում նաև էլեկտրոնային ուսուցման, սովորողների և մանկավարժների գործունեության իրականացման համար,
- բարձրացնել կրթական համակարգի բոլոր աստիճաններում (նախադպրոցական, դպրոցական, բուհական) ռուսաց լեզվի ուսուցման որակը:

IV ԽՆԴԻՐՆԵՐ

Ռուսաց լեզվի համակարգային ուսուցման բազմամյա ավանդույթները

ուսումնական հաստատություններում իրենցից ներկայացնում են ՀՀ կրթական ընդհանուր համակարգի կարևորագույն ներուժ: Դրա հետ մեկտեղ կան մի շարք չլուծված խնդիրներ, այդ թվում՝ բովանդակային, մեթոդական, ինչպես նաև կադրային.

- «Ռուսաց լեզու» առարկայի ծրագրերը լիովին չեն ապահովում սովորողների հաղորդակցական կարողությունների մակարդակը: Շատ շրջանավարտներ չեն տիրապետում բանավոր և գրավոր խոսքի հմտություններին, գրական ռուսաց լեզվի և խոսքի կանոններին,
- Տեսական գիտելիքների տիրապետումը շատ դեպքերում, պարզվում է, մեկուսացված է այդ գիտելիքները գործնական միջավայրում, բանավոր խոսքում կիրառելու հմտություններից,
- Լիարժեք ապահովված չէ առարկայի բովանդակության տարբերակում (սովորողների կրթական կարիքների և շահերի հաշվարկով) ռուսերենի տիրապետման նրանց մակարդակի խորը ուսումնասիրության (պրոֆիլային ուսուցման) կազմակերպման համար,
- Կրթական պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ կրթական ծրագրերը միշտ չէ, որ համապատասխանում են սովորողների տարիքային առանձնահատկություններին,
- Սովորողների՝ ռուսաց լեզվի տիրապետման անհավասար մակարդակը կրթական գործունեության մեջ առաջացնում է նաև այլ ուսումնական առարկաների դասավանդման մեթոդիկա մշակելու, ներդնելու անհրաժեշտություն (դիֆերենցված ուսուցում),
- Ռուսաց լեզվի ուսուցիչների նախապատրաստման և մասնագիտական լրացուցիչ կրթության համակարգը լիովին չի համապատասխանում ժամանակակից պահանջներին: Չկան մանկավարժների մասնագիտական հմտությունների համալիր կատարելագործման մեխանիզմներ,
- Ուսուցիչների աշխատանքի որակի գնահատման համակարգը՝ մասնավորապես ատեստավորումը, կրում է ձևական բնույթ, չի նպաստում նրանց մասնագիտական աճին:

V ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Միջնակարգ ընդհանուր հանրակրթության պետական կրթական չափորոշիչներում նպատակահարմար է վերանայել և մանրամասնել «Ռուսաց լեզու» առարկայի բովանդակային պահանջները:
- Ռուսաց լեզվի ուսուցում այս կամ այն առարկայական ոլորտում (ֆիզիկա, մաթեմատիկա, աշխարագրություն և այլն), այսինքն՝ ավագ դպրոցում մի շարք առարկաներից որոշ թեմաների՝ հայերենին զուգահեռ դասավանդում**:**
- Ռուսաց լեզվի խորացված ուսուցմամբ դպրոցների և դասարանների (ինչպես նաև ռուսերենով ուսուցմամբ դասարանների) թվի ավելացման նպատակահարմարության որոշման համար մշտադիտարկման անցկացում:
- Ռուսաց լեզվի ուսուցիչների վերապատրաստման և լրացուցիչ

մասնագիտական կրթության համակարգի կատարելագործում:

- Մշակել մեխանիզմներ մանկավարժական աշխատողների մասնագիտական գիտելիքների համալիր և շարունակական կատարելագործման ուղղությամբ (այդ թվում՝ հեռահար ձևաչափով ժամանակակից տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառում):
- Զարգացնել էլեկտրոնային կրթական միջավայրեր, որոնք թույլ են տալիս սովորողներին լրացուցիչ տեղեկատվություն ստանալ, ինչպես նաև ինքնուրույն կամ ուսուցչի օգնությամբ յուրացնել կրթական ծրագրերը:
- Արդիականացնել մոտեցումները և մեթոդները («Ռուսաց լեզվի» և այլ առարկաների դասավանդման մեթոդների մշակում՝ հիմնված ժամանակակից լեզվաբանության և միջմշակութային հաղորդակցության տեսության վրա:
- Ապահովել կրթության առանձնահատուկ կարիք ունեցող երեխաների (լսողության, տեսողության և այլ խնդիրներով) ռուսաց լեզվի ուսուցման համար պետական չափորոշիչներին և ծրագրերին համապատասխան հատուկ ծրագրեր, ուսումնական նյութեր, անհրաժեշտ տեխնիկական միջոցներ,
- «Ռուսաց լեզու» առարկայի պետական ամփոփիչ ատեստավորման ժամանակ ոչ միայն գրավոր, այլ նաև բանավոր խոսքի տիրապետման մակարդակի գնահատում:

10) 10-12-րդ դասարաններում ռուսաց լեզուն կարող է հանդես գալ որպես՝

- ***պարտադիր դասընթաց,***
- ***առարկա՝ սովորողի ընտրությամբ,***
- ***դասընթաց՝ ըստ նախասիրության:***
- Դասերը կազմակերպել փոքր խմբերով:

12) Սովորողների մասնագիտական կողմնորոշմանը համապատասխան՝ բոլոր հոսքերի համար կարող են նախատեսվել ռուսաց լեզվի հատուկ դասընթացներ:

- Ապահովել հիմնական դպրոցում լեզվական հաղորդակցական կարողության նվազագույն տիրապետումը՝ 1-A2.2, իսկ ավագ դպրոցում՝ B1.1 B1.2 մակարդակներով,
- Մշակել դասավանդման արդյունավետ մեթոդներ և տեխնոլոգիաներ՝ սովորողների տարիքային առանձնահատկություններին, կարիքներին և հետաքրքրություններին համապատասխան (այդ թվում՝ առարկայի խորացված ուսուցման կազմակերպման համար (մասնագիտական կամ տարբերակված ուսուցում)):
- Ստեղծել ռուսաց լեզվի նոր սերնդի դասագրքեր՝ տարբերակման և անհատականացման հիման վրա կազմված, որոնք ուղղված են կրթական ծրագրերի պարտադիր և տարբերակված բաղադրիչների օպտիմալ համադրությանը և նախատեսում են սովորողների ինքնուրույն ստեղծագործական աշխատանքների առաջնահերթության զարգացում:
- Ապահովել լեզվի տեսական ուսումնասիրության և գործնական խոսքի

հմտությունների ձևավորման միջև օպտիմալ հարաբերակցություն՝ հաշվի առնելով սովորողների թվաքանակը, այդ թվում՝ առարկային հատկացված ներկայումս առկա ուսումնական ժամերի բաշխումն ու ծավալը:

<<Ռուսաց լեզու>> առարկային տիրապետումը պետք է ներառի՝

1. Լեզվի անհրաժեշտ կոմպետենցիաների տիրապետում՝

- լեզվական գործունեության բոլոր տեսակների տիրապետում (լսողություն, ընթերցանություն, խոսք, գիր), հաղորդակցման բոլոր բնագավառներում խոսքի հմտությունների ճիշտ օգտագործման կարողություն.
- բանավոր և գրավոր խոսքի գրագիտության ձևավորում.

2. Ռուսաց լեզվի և ուսումնական այլ առարկաների միջառարկայական կապերի ձևավորում (օտարլեզուներ, գրականության և այլն).
3. Տեղեկատվական-հաղորդակցական միջոցների և պաշարների օգտագործում (ներառյալ տպագիր և էլեկտրոնային բառարաններ, թարգմանիչներ, ուղղագրության ստուգման ծրագրեր, որոնման համակարգեր, տեքստի և բանավոր մուտքագրման ճանաչման համակարգեր):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով շարադրվածը՝ կարելի է պնդել, որ իրավիճակի բարելավումը հնարավոր է դպրոցում լիարժեք լեզվակրթության խնդրի լուծման պարագայում՝ սովորողներին բազմազգ և բազմամշակութային, ժողովրդավարական հասարակության մեջ ապրելուն և գործունեություն ծավալելուն նախապատրաստելով:

Կրթական քաղաքականության գլխավոր խնդիրն է ապահովել կրթության որակը՝ պահպանելով նրա հիմնարար բնույթը և բավարարելով անձի, հասարակության և պետության արդիական ու հեռանկարային պահանջմունքները:

Սույն հայեցակարգի իրականացումը կապահովի ռուսաց լեզվի ուսուցման և դասավանդման նոր մակարդակ: